ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
«ԶԱՆԳԵԶՈՒՐ» ԿԵՆՍՈԼՈՐՏԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐ» ՊՈԱԿ-Ի 2024 ԹՎԱԿԱՆԻ ԻՆՆ ԱՄՍՅԱ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

«Զանգեզուր» Կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ը ՀՀ կառավարության 2013թ. դեկտեմբերի 19-ի թիվ 1465-Ն և 2016թ. սեպտեմբերի 8-ի թիվ 929-Ն որոշումների համաձայն իրականացրել է աշխատանքներ 79038,8հա բնության հատուկ պահպանվող տարածքներում՝ որից

- «Շիկահող» մասնաճյուղ «Շիկահող» պետական արգելոց» տեղամաս– 12137.075հա

  «Սոսու պուրակ» պետական արգելավայր» տեղամաս– 64.2հա

  «Խուստուփ» պետական արգելավայր» տեղամաս- 6946.74հա
- «Զանգեզուր» մասնաճյուղ «Զանգեզուր» պետական արգելավայր» տեղամաս- 25711,5959հա

  «Սև Լիճ» պետական արգելավայր» տեղամաս– 240հա
- «Արևիք» մասնաճյուղ «Արևիք» ազգային պարկ» տեղամաս- 31211,19հա
- «Բողաքար» պետական արգելավայր» տեղամաս- 2728հա

1. Բնական էկոհամակարգերի, լանդշաֆտային և կենսաբանական բազմազանության, բնության ժառանգության գիտական ուսումնասիրության, հաշվառման, գույքագրման, մոնիթորինգի, բնության տարեգրության վարման միջոցառումների իրականացում

1.1 ՊՈԱԿ-ի տնօրինության տակ գտնվող բնության հատուկ պահպանվող տարածքներում ընդհանուր միջոցառումների իրականացում (79038.8 հա):

- Աշխատանքներն իրականացվել են «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի 2024 թվականի աշխատանքային ծրագրի համաձայն:
- Ինն ամսվա ընթացքում բնության հատուկ պահպանվող տարածքներում էկոպարեկային ծառայության աշխատակիցների հետ համտեղ արձանագրվել է իրավախախտման 3 դեպք՝

1. 01.02.2024 թվականին <<Շիկահող>> մասնաճյուղի <<Շիկահող>> ՊԱ տեղամասի 6-րդ պահաբաժնում՝ արձանագրվել է ապօրինի ծառահատման 1 դեպք: Իրավախախտում կատարած անձի վերաբերյալ տեղեկություններ չկան: Հատվել է 1 հատ բոխի տեսակի 56 տրամագծով մոտ 12 մ երկարությամբ ծառ:Փայտանյութը ամբողջությամբ գտնվում է տեղում: Սահմանված կարգով տրվել է համապատասխան ընթացք:

2. 01.04.2024 թվականին <<Շիկահող>> մասնաճյուղի <<Շիկահող>> ՊԱ տեղամասի 10-րդ պահաբաժնում արձանագրվել է ապօրինի ծառահատման 1 դեպք: Իրավախախտում կատարած անձի վերաբերյալ տեղեկություններ չկան: Հատվել է 1 հատ կաղնի տեսակի 40 տրամագծով մոտ 6մ երկարությամբ ծառ:Փայտանյութը ամբողջությամբ գտնվում է տեղում:

3. 22.08.2024 թվականին <<Արևիք>> մասնաճյուղի <<Արևիք>> ՊԱ տեղամասի 7-րդ պահաբաժնում արձանագրվել է ապօրինի ծառահատման I դեպք: Իրավախախտում կատարած անձի վերաբերյալ տեղեկություններ չկան: Հատվել է 30 հատ կաղնի տեսակի տարբեր տրամագծով ծառեր:Փայտանյութը ամբողջությամբ գտնվում է տեղում: Սահմանված կարգով տրվել է համապատասխան ընթացք:

1.2 Հրդեհային անվտանգության միջոցառումների իրականացում: Հակահրդեհային ճանապարհների ընթացիկ նորոգում:

ՇՄՆ նախարարի տեղակալի N/16.11/1475 հանձնարարականի հիման վրա հրդեհավտանգ ժամանակահատվածով պայմանավորված, հնարավոր հրդեհների առաջացումը կանխելու նպատակով ձեռնարկվել են գործուն միջոցներ և «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի գույքը պատրաստ է հրդեհի մարման աշխատանքներին:

Հիմք ընդունելով Շրջակա միջավայրի նախարարի 2024 թվականի օգոստոսի 27-ի 14940 հանձնարարականը,պետական ոչ առևտրային կազմակերպության պահպանվող անտառածածկ և բուսածածկ տարածքներում իրականացվել են գործուն միջոցառումներ հնարարվոր հրդեհները կանխելու նպատակով:

- **ԻՆՆ ամիսների ընթացքում <<Զանգեզուր>> կենսոլորտային համալիր ՊՈԱԿ-ի տարածքում հրդեհներ չեն արձանագրվել:**
- **ԻՆՆ ամիսների ընթացքում «<<Զանգեզուր>> կենսոլորտային համալիր ՊՈԱԿ-ի հարակից տարածքում արձանագրվել է հրդեհի 2 դեպք:**
- 2024 թվականի սեպտեմբերի 03-ին Մեղրի-Երևան ավտոմայրուղու 32-րդ կմ-ի վրա, <<Արևիք>> մ/ճ-ի <<Արևիք>> ազգային պարկ տեղամասի 5-րդ պահաբաժնին հարակից ճանապարհին անմիջապես մոտ հրդեհ էր բռնկվել: <<Արևիք>> մ/ճ-ի տնօրենն և անտառագետը, ՀՓՋ-ի 1 մարտական հաշվարկի հետ համատեղ իրականացրել են հրդեհաշիջման աշխատանքներ: Հրդեհը մարվել է 14.55-ին: Այրվել է մոտ 600 քմ խոտածածկ տարածք: Նշված տարածքում ծառեր և թփեր չկան:
- 2024 թվականի սեպտեմբերի 6-ին ժամը 12:00-ի սահմաններում ԶԿՀ-ՊՈԱԿ-ի «Արևիք» մ/ճ-ի «Արևիք» ազգային պարկի հարակից Լիճքի համայնքային «Թաղամիր» արոտներում արձանագրվել է հրդեհ: Հրդեհաշիջման աշխատանքներին «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ից մասնակցել է 2 աշխատակից, էկոպարեկային ծառայության 5 աշխատակից, Տաշտուն գյուղից 2 բնակիչ, ինչպես նաև Մեղրիի ՀՋՓ-ի 1 մարտական հաշվարկ: Հրդեհաշիջման աշխատանքները սկսվել ենք 12:22-ին՝ ԶԿՀ-ի հակահրդեհային տեխնիկայի միջոցներով՝ ջրցան ուսապարկերով, ջրի ցողիչներով և հրշեջ մեքենայի օգնությամբ: Հրդեհը հնարավոր էր մարել ժամը 15:00-ի սահմաններում, իսկ ծխացող օջախները լիովին մեկուսացրինք ժամը 15:37-ի

սահմաններում: Հրդեհվել է մոտ 5500 քմ խոտածածկ տարածք, թույլ շոգեխաշվել են եզակի թփեր և ծառեր:

1.3 Համագործակցություն տեղական և ինքնակառավարման մարմինների հետ՝ ներգրավելով նրանց ՊՈԱԿ-ի տնօրինության ԲՀՊ տարածքների միջոցառումների իրականացմանը:

2024 թվականի ինն ամիսների ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինների, հարակից համայնքների ղեկավարների և ՊՆ ղեկավարության հետ անց են կացվել քննարկում-զրույցներ՝ 120 անգամ, Սյունիքի մարզում տիրող դրության և ազգաբնակչության հետ հակասությունները մեղմելուն ուղղված թեմաներով: Այդ ընթացքում քննարկվել են աղբահանության, անվտանգության, անտառային խախտումների նվազեցման, հակահրդեհային կանոնների պահպանմանն ուղղված միջոցառումներ:

1.4 ՊՈԱԿ-ի տնօրինության ԲՀՊ-ի տարածքներում հերթական վերստուգիչ ստուգումների անցկացում և արդյունքների ամփոփում (գարնանային – ։ եռամսյակ) (ստուգում):

Ինն ամիսների ընթացքում, հիմք ընդունելով Շրջակա միջավայրի նախարարի 2024 թվականի մարտի 06-ի հանձնարարականը, Շրջակա միջավայրի նախարարության էկոպարեկային ծառայության հետ համատեղ «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» պետական ոչ առևտրային կազմակերպության տարածքներում, իրականացվել է տեղազննություն:

1.5. Հարող բնակավայրերի բնակչության շրջաններում էկոլոգիական իրազեկություն, էկոդաստիարակութուն:

Ընդհանուր միջոցառումների, պատշաճ հսկողության, սիստեմատիկ ստուգայցերի, շրջկալների և հարակից համայնքների ազգաբնակչության հետ իրականացված հանդիպումների շնորհիվ, ապահովում ենք բնության հատուկ պահպանվող տարածքների կենսաբազմազանության պահպանությունը և բնականոն կայուն զարգացումը:

1.6 Ծառատնկման աշխատանքների իրականացում

Ապրիլի 27-ին տեղի ունեցած համապետական ծառատունկին ՊՈԱԿ-ի աշխատակիցների մի մասը՝ էկոպարեկային ծառայության հետ համատեղ մասնակցել է Սյունիքում իրականացված ծառատունկին:

Մայիսի 15-ին ՇՄՆ «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի կողմից «Արևիք» ազգային պարկի տարածքում՝ Լիճքի ջրվեժների կասկադ տանող արահետի երկայնքով իրականացվել է 200 հատ ծառերի տնկում, որին ներգրավվել են Մեղրու թիվ 1 դպրոցի աշակերտները՝ տնօրեն Հովհաննես Մելիքսեթյանի գլխավորությամբ: Մինչ ծառատնկման աշխատանքների մեկնարկը, «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի տնօրեն Արման Մկրտչյանը և «Արևիք» մասնաճյուղի տնօրեն Արթուր Սամվելյանն էկոդաստիարակչական զրույց են ունեցել աշակերտների հետ, ներկայացրել ծառատունկերի կարևորությունն ու անհրաժեշտությունը, մարդու

ներգործության արդյունքում բնության մեջ առաջացող խաթարումների հետևանքները հանրության կենսակերպի վրա, բնության մեջ հավասարակշռության պահպանությունը և մարդ- բնություն կապի ամրապնդումը: Գիտության և զբոսաշրջության բաժնի պետ- կենսաբազմազանության մոնիթորինգի մասնագետ Հարութ Աղաթելյանի կողմից նախապես ներկայացվել է ծառերի տնկման ձևը և հետագա խնամքը: Ծառատունկի ընթացքում տնկվել են նաև «My forest Armenia» կազմակերպության կողմից տրամադրված տնկիները:

2. Գիտական և էկոտուրիզմի զարգացմանն ուղղված միջոցառումներ

2.1 Գիտահետազոտական միջոցառումների իրականացում

ա) կենսաբազմազանության մոնիտորինգի միջոցառումների իրականացման համար նախադրյալների ապահովում,

բ) ողնաշարավոր կենդանիների որոշ խմբերի հաշվառմանն ուղղված աշխատանքներ, ուսումնասիրություններ և ներկա վիճակի վերլուծության՝ (մուֆլոն, վայրի խոզ, եվրոպական այծյամ, բեզոարյան այծ, գորշ արջ, շնագայլ, գայլ, առաջավորսիական ընձառյուծ), ներառյալ բուսական տեսակների հաշվառմանն ուղղված աշխատանքներ,

գ) ԲՀՊ տարածքներում հանդիպող, բնադրվող չվող և նստակյաց թռչնատեսակների ուսումնասիրություններ:

Ինն ամիսների ընթացքում իրականացվել են սեզոնային և մշտադիտարկման ստուգայցեր «Շիկահող» և «Զանգեզուր» մասնաճյուղերում լեռնային և անտառային հատվածներում, որոնց ընթացքում կատարվել է տեղանքի և խոնավ հատվածների ուսումնասիրություններ՝ խոշոր կաթնասունների թողած հետքերի, ոտնահետքերի և կատարած տեղաշարժերի ուսումնասիրություններ: «Շիկահող» պետական արգելոցում հանդիպել են Եղեգնակատու, Եվրոպական այծյամ, Սովորական շնագայլ, Փորսուղ, Վայրի խոզ, Քարակզաքիս: «Զանգեզուր» արգելավայրի բարձրադիր հատվածներում հանդիպել են Բեզոարյան այծի և Հայկական մուֆլոնի մեծ և փոքր խմբեր՝ 3-18 առանձնյակներով, որոնց մեծ մասը էգ էին:

Ինն ամսիների ընթացքում կատարվել է «Շիկահող» պետական արգելոցում և «Զանգեզուր» արգելավայրի տարածքներում տեղադրված ֆոտոխցիկների ստուգում և տեղափոխում: Ֆոտոխցիկների միջոցով արձանագրվել են կաթնասունների հետևյալ տեսակները՝ Գորշ արջ, Վայրի խոզ, Եղեգնակատու, Անտառային կատու, Փորսուղ, Քարակզաքիս, Եվրոպական այծյամ, Սովորական շնագայլ, Աղվես: Արձանագրվել են նաև թռչնատեսակներ՝ Ամուրիկ, Սովորական քարաթռչնակ, Սև կեռնեխ, Երգող կեռնեխ, Սևուկ կարմրատուտ, Լեռնային ձիաթռչնակ, Եղնջաթռչնակ և Եղջերավոր արտույտ:

Ինն ամիսների ընթացքում իրականացվել են ստուգայցեր «Զանգեզուր» պետական արգելավայրում, «Շիկահող» պետական արգելոցում և «Արևիք» ազգային պարկում , որոնց ընթացքում կատարվել են խոշոր կաթնասունների և տարածքում հանդիպող բնադրվող, չվող, նստակյաց թռչնատեսակների տեսակային

ուսումնասիրություններ: Ուսումնասիրությունների ընթացքում «Շիկահող» պետական արգելոցի տարածքում արձանագրվել է ժապավենաձև որդերի ներկայացուցիչ՝ եզան երիզորդով վարակված երվրոպական այծյամի թողած հետքեր և կղկղանք: Այծյամի անկման դեպքեր չեն արձանագրվել: Ուսումնասիրությունների ընթացքում հանդիպել են հետևյալ տեսակները՝ Բոզոարյան այծ, Սովորական շնագայլ, Փորսուղ, Քարակզաքիս, Եվրոպական այծյամ, Եղեգնակատու, Գորշ նապաստակ, Անդրկովկասյան փասիան, Քարակաքավ, Մոխրագույն կաքավ, Քարարծիվ, Սպիտակագլուխ անգղ, Գիշանգղ, Գառնանգղ, Մեծ ճուռակ, Տափաստանային ճուռակ, Խայտաբղետ փայտփոր, Կիսասպիտակավիզ ճանճորս, Փոքր ճանճորս, Ամուրիկ, Արշալուսիկ, Մեծ երաշտահավ, Սև երաշտահավ, Երկնագույն երաշտահավ, Պիրոլ, Երկնագույն ալկիոն, Լեռնային դրախտապան, Սևագլուխ շահրիկ, Սովորական խածկտիկ, Երգող կեռնեխ, Սոսնձակեռնեխ, Սև կեռնեխ, սինակեռնեխ, Խայտաբղետ քարակեռնեխ, Սովորական կարմրատուտ, Սևուկ կարմրատուտ, Անտառային կաչաղակ, Սևագլուխ չչչքան, Մոխրագույն ճանճորս, Անտառային արտույտ:

Գարնանային և աշնանային ամիսներին իրականացվել են չվող տեսակների տեսակային ուսումնասիրություններ մասնաճյուղերում՝ տարածքում հանդիպող, բնադրվող, նստակյաց թռչնատեսակների մոտ առատ ձյան շրջանում կատարվող փոփոխություններն ուսումնասիրելու նպատակով: Ուսումնասիրությունների ընթացքում հանդիպել են հետևյալ թռչնատեսակները՝ Երկնագույն երաշտահավ, Մեծ երաշտահավ, Սև երաշտահավ, Սովորական խածկտիկ, Ամուրիկ, Արշալուսիկ, Սոսնձակեռնեխ, Երգող կեռնեխ, Սև կեռնեխ, Սպիտակախածի կեռնեխ, Սինակեռնեխ, Անտառային կաչաղակ, Կարմրակատար, Հատբեկիչ, Ազնվասարեկ, Սովորական սարյակ, Սովորական սիտեղ, Ծվծվիկ, Սովորական ճնճղուկ, Դաշտային ճնճղուկ, Եղնջաթռչնակ, Մոխրագույն կաքավ, Քարակաքավ, Տափաստանային ճուռակ, Մեծ ճուռակ, Լորաճուռակ, Ցախաքլորառոս, Քարարծիվ, Սև ագռավ:

ՀՀ կենդանաբանության ինստիտուտի միջատաբանության լաբորատորիայի աշխատակիցների հետ համատեղ ՊՈԱԿ-ի «Շիկահող» պետական արգելոցի և «Արևիք» ազգային պարկի տարածքներում և հարակից գոտիներում որոշ տեսակի միջատների ուսումնասիրության նպատակով տեղադրվել են թակարդներ, որոնք կստուգվեն ամսական պարբերականությամբ: Ըստ այդմ՝ «Արևիք» ազգային պարկի տարածքում, ՀՀ ԳԱԱ կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի և Չեխիայի միջատաբանական ընկերության միջև կնքված գիտական համագործակցության համաձայնագրի շրջանակներում ընկերության գիտաշխատողներ՝ Դուշան Վակուլան և Միխալ Պիկները պարկի տարածքում կատարել են միջատների հետազոտություններ և մոնիթորինգ:

ՀՀ ԳԱԱ կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի գիտաշխատողների կողմից հուլիսի 22-26-ը «Արևիք» ազգային պարկում իրականացրել են միջատների հետազոտություններ և մոնիթորինգ:

«Բրդ.Լինքս Հայաստան» ՀԿ-ի գիտաշխատողների կողմից ՊՈԱԿ-ի ենթակայության տակ գտնվող «Արևիք» ազգային պարկի տարածքում իրականացվում է թռչունների մոնիթորինգ:

ՀՀ շրջակա միջավայրի նախարարության և Կովկասի բնության հիմնադրամի նախաձեռնությամբ իրականացվող «Կենսաբազմազանության առաջնահերթ ցուցիչ տեսակների մոնիթորինգի պլան Հայաստանի համար 2023-2032թթ» նախագծի շրջանակում ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի Ա.Լ. Թախտաջյանի անվան բուսաբանության ինստիտուտի, Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի և «Կաթնասունաբանների հայկական ասոցացիա» ՀԿ-ի մասնագետների հետ համատեղ ՊՈԱԿ-ի «Շիկահող» պետական արգելոցում և «Արևիք» ազգային պարկում իրականացվել են բուսական աշխարհի մշտադիտարկման աշխատանքներ, որոնց ընթացքում կատարվել է տեսակների տեղազննում, նմուշառումներ, աճելավայրի կոորդինատների որոշում և գրանցում՝ առաջիկա տարիներին նրանց մոտ տեղի ունեցած փոփոխություններն ուսումնասիրելու նպատակով:

Հուլիսի 23-25-ը իրականացվել է գիտարշավ՝ ԳԱԱ Թախտաջյանի անվան բուսաբանության ինստիտուտի գիտաշխատողների կողմից: Հետազոտություններն իրականացվել են երկու ուղղությամբ՝ քարաքոսաբանական և անտառագիտական: Քարաքոսաբանական հետազոտությունների շրջանակում ուսումնասիրվել են «Շիկահող» պետական արգելոցի, «Խուստուփ» պետական արգելավայրի և «Արևիք» ազգային պարկի տարածքներում հանդիպող քարաքոսերի հիմնական տեսակները: Անտառագիտական ուսումնասիրություններ են իրականացվել «Շիկահող» պետական արգելոցի Կենու և հաճարենու պուրակներում, կատարվել է նմուշառում՝ տեսակների դինամիկայի դիտարկման նպատակով:

«Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի «Զանգեզուր» արգելավայրի տարածքում ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի Ա.Լ. Թախտաջյանի անվան բուսաբանության ինստիտուտի, Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի և «Կաթնասունաբանների հայկական ասոցացիա» ՀԿ-ի մասնագետների հետ համատեղ իրականացվել են բուսական աշխարհի մշտադիտարկման աշխատանքներ՝ ՀՀ շրջակա միջավայրի նախարարության և Կովկասի բնության հիմնադրամի նախաձեռնությամբ իրականացվող «Կենսաբազմազանության առաջնահերթ ցուցիչ տեսակների մոնիթորինգի պլան Հայաստանի համար 2023-2032թթ» նախագծի շրջանակում:

ՇՄՆ «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի տարածքում իրականացվել է կրծողների մոնիթորինգ՝ Կովկասի բնության հիմնադրամի ֆինանսավորմամբ, ԿԲՀ-ի և «Կաթնասունաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ-ի միջև ստորագրված դրամաշնորհային պայմանագրի շրջանակներում:

Կազմակերպության տնօրեն Արման Մկրտչյանը «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի գրասենյակում հյուրընկալել է ԳԱԱ կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի կենտրոնի աշխատակիցներին՝ «Հայաստանի թռչնաֆաունայի

ներկայացուցիչների բարկոդավորում» գիտական թեմայով ծրագրի իրականացման նպատակով՝ ՊՈԱԿ-ի ԲՀՊՏ հարակից գոտիներում անհրաժեշտ գործողությունների իրականացման համար համապատասխան տեղանք ընտրելու համար: Ըստ այդմ՝ Արման Մկրտչյանի և գիտության ու զբոսաշրջության բաժնի պետ-կենսաբազմազանության մոնիթորինգի մասնագետ Հարութ Աղաթելյանի ուղեկցությամբ ՊՈԱԿ-ի «Շիկահող» մասնաճյուղի հարակից տարածքներում իրականացվել է շրջայց:

Ընձառյուծի պահպանության ծրագրի շրջանակում ՇՄՆ «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի և Բնության համաշխարհային հիմնադրամ-Հայաստանի ներկայացուցիչները մարտի 13-22-ը համատեղ իրականացրել են մշտադիտարկման աշխատանքներ «Արևիք» ազգային պարկում՝ Ընձառյուծի ապրելավայրերի, ինչպես նաև նրա համար կեր հանդիսացող տեսակների ուսումնասիրության նպատակով: Իրականացվել են պարկի տարածքում տեղադրված ֆոտոբռնիչ սարքերի ստուգում, որի արդյունքում արձանագրվել է Ընձառյուծ, ինչպես նաև Գորշ արջ, Եվրոպական այծյամ, Բեզոարյան այծ, Եվրոպական լուսան և այլն: Ընձառյուծի մոնիթորինգի արդյունավետության բարձրացման նպատակով տեղադրվել են նոր ֆոտոբռնիչ սարքեր:

«Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի՝ Բնության համաշխարհային հիմնադրամի (WWF) Հայաստանյան մասնաճյուղի հետ համատեղ ինն ամիսների ընթացքում իրականացված մշտադիտարկման արդյունքում ֆոտոբռնիչ սարքերի կողմից 12 անգամ արձանագրվել է ընձառյուծ՝ «Արևիք» ազգային պարկի տարածքում:

Ինն ամսների ընթացքում ՊՈԱԿ-ի հատուկ պահպանվող տարածքներում տեղադրված առցանց տեսահսկման սարքերի կողմից մոտ 30 անգամ արձանագրվել են մի շարք կենդանատեսակները՝ Գորշ գայլ, Գորշ արջ, Սովորական աղվես, Գորշ նապաստակ, Եվրոպական լուսան, Եվրոպական այծյամ, Բեզոարյան այծ, Եղեգնակատու, Փորսուղ, Վայրի խոզ, Քարակզաքիս, աքիս:

2.2 Էկոտուրիզմի զարգացմանն ուղղված միջոցառումներ՝ ՊՈԱԿ-ի ԲՀՊ տարածքներում առկա երթուղիներով կազմակերպված գիտաճանաչողական արշավներ, զբոսաշրջային ծառայությունների մատուցում

Ինն ամիսների ընթացքում, էկոլոգիական իրազեկվածության բարձրացման նպատակով, իրականացվել է 2 գիտաճանաչողական արշավ՝

ՀԿՀ «Արևիք» մասնաճյուղի տնօրեն Արթուր Սամվելյանի կողմից, պահպանվող տարածքներին հարակից՝ Մեղրի և Ագարակ համայնքների պատանիների համար կազմակերպվել է գիտաճանաչողական արշավ՝ «Բողաքար» արգելավայրում, որի շրջանակում երիտասարդները քայլարշավել են դեպի Բողաքարի ջրվեժ, անց է կացվել էկոդաս, ներկայացվել է «Բողաքար» արգելավայրի բուսական և կենդանական աշխարհը, ցուցադրվել են մասնաճյուղի տարածքում

վերջերս արձանագրված Ընձառյուծների տեսանյութերը, պատմել դրանց կենսամիջավայրի առանձնահատկությունների և կենսակերպի մասին, այնուհետև իրականացվել է դիտարկում:Առանձնակի շեշտադրվել է բնության արժևորման և առողջ շրջակա միջավայրի պահպանման առանցքային քայլերը: Համատեղ իրականացվել է շաբաթօրյակ:

Երիտասարդության միջազգային օրվան նվիրված միջոցառումների շրջանակում օգոստոսի 14-ին ՇՄՆ «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի կողմից «Ծիածան» առաջնորդների կրթական կենտրոն» ՀԿ-ի ամառային դպրոցի սաների համար կազմակերպվել է գիտաճանաչողական արշավ «Ծիկահող» պետական արգելոցում: Քայլարշավի ընթացքում գիտության և զբոսաշրջության բաժնի աշխատակիցները ծանոթացրել են արահետի վրա հանդիպող բուսատեսակներին, այնուհետև ներկայացրել բնության հատուկ պահպանվող տարածքների դերն ու առանձնահատկությունները, արգելոցի կենսաբազմազանությունը, ինչպես նաև պահպանվող տարածքներում կազմակերպվող էկոզբոսաշրջությունը:

Զբոսաշրջություն

Կազմակերպության ենթակայության տակ գտնվող «Խուստուփ» արգելավայրի հարակից տարածքում աշխարհահռչակ դաշնակահար Տիգրան Համասյանի համերգի նախօրյակին ՇՄՆ «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի կողմից ապրիլի 20-21-ը կազմակերպվել էր աննախադեպ վրանային ճամբար, առանձնացված ժամանցային մի շարք գոտիներով: Հյուրերի համար ՊՈԱԿ-ի կողմից կազմակերպվել էր Խուստուփյան անուշաբույ բթեյերի հյուրասիրություն, տեղակայվել էր գրադարան, ցուցադրվել է «ԳարեգինՆժդեհ» ֆիլմը, ինչպես նաև ստեղծվել էր լուսանկարչական անկյուն՝ «I love Khustup» գրվածքով, ինչպես նաև տեղակայվել էր՝ Arloopa հավելվածի միջոցով Ընձառյուծի հետ լուսանկարվելու համար նախատեսված հարթակ: ՊՈԱԿ-ի կողմից ամենագնաց մեքենաներով նաև իրականացվել է այցելուների տեղափոխում Կապան համայնքից մինչև վրանային ճամբար և հակառակը:

ՊՈԱԿ- ի «Արևիք» ազգային պարկի զբոսաշրջային հիմնական ուղղություն հանդիսացող՝ Լիճքի ջրվեժներ տանող արահետի վիճակի ուսումնասիրման և գնահատման նպատակով իրականացվել է շրջայց՝ արահետների կահավորման և ցուցանակների տեղադրման նպատակով:

ՀՀ շրջակա միջավայրի նախարարության կողմից կազմակերպվել է «Էկոզբոսաշրջության կազմակերպումը բնության հատուկ պահպանվող տարածքներում» խորագրով հանդիպում-քննարկում ոլորտի ներկայացուցիչների հետ, որին մասնակցել է նաև «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի տնօրեն Արման Մկրտչյանը: Գործընկերներին ներկայացվել է ՊՈԱԿ-ի զբոսաշրջային ներուժը, առկա մարտահրավերները, ինչպես նաև համագործակցության պատրաստակամությունը:

«Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի և «Արահետներ փոփոխության համար» ՀԿ-ի համագործակցության շրջանակում իրականացվել է համատեղ շրջայց՝ ԶԿՀ «Արևիք» ազգային պարկի զբոսաշրջային հիմնական ուղղություններ հանդիսացող՝ Սրտերի ջրվեժ և Լիճքի ջրվեժներ տանող արահետների կահավորման համար անհրաժեշտ գործողությունների մշակման նպատակով:

ՇՄՆ «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի և «Արահետներ փոփոխության համար» ՀԿ-ի համագործակցության շրջանակում, Կովկասի բնության հիմնադրամի և «Տրանսկովկասյան արահետ» ՀԿ-ի համաֆինանսավորմամբ, ՊՈԱԿ-ին նվիրաբերվել է արահետաշինական գույք՝ ԶԿՀ կողմից կառավարվող հատուկ պահպանվող տարածքների զբոսաշրջային առկա արահետների սպասարկման, ինչպես նաև նոր արահետների ստեղծման աշխատանքների իրականացման նպատակով:

Ինն ամիսների ընթացքում կազմակերպվել են արշավներ՝ «Շիկահող» պետական արգելոցի, «Զանգեզուր» պետական արգելավայրի և «Արևիք» ազգային պարկի տարածքներում:

9-ն ամիսների ընթացքում զբոսաշրջային ծառայություններից օգտվել է 414 զբոսաշրջիկ, որի արդյունքում ստացված եկամուտը կազմել է 1413000 ՀՀ դրամ:

2.3 ՊՈԱԿ-ի կողմից իրականացվող էկոկրթական միջոցառումներ՝ հանրության իրազեկվածության և էկոլոգիական գիտակցության բարձրացման նպատակով.

Հանրության էկոլոգիական իրազեկվածության բարձրացման նպատակով ինն ամիսների ընթացքում տեղի են ունեցել 10 էկոկրթական հանդիպում, որոնց մասնակցել է 404 անձ:

Փետրվարի 9-ին ՇՄՆ «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի կողմից հյուրընկալվել էին Կապանի թիվ 10 միջնակարգ դպրոցի 7-րդ դասարանի աշակերտներն՝ ուսուցիչների ուղեկցությամբ ընդհանուր:

Փետրվարի 23-ին էկոկրթական հանդիպում Կապանի թիվ 13 հիմնական դպրոցի 4-րդ, 5-րդև 6-րդ դասարանների աշակերտների հետ «Մարդը բնության մի մասնիկն է» թեմայով:

Մարտի 22-ին էկոկրթական հանդիպում Կապանի թիվ 1 հիմնական դպրոցի սաների հետ բնապահպանական տոների վերաբերյալ:

Մարտի 29-ին առանց թափոնների միջազգային օրվա առաքելության և նպատակների վերաբերյալ իրազեկվածության բարձրացման նպատակով էկոկրթական դասընթաց:

Մայիսի 3-ին՝ ընձառյուծի միջազգային օրվա կապակցությամբ, էկոկրթական հանդիպում Լեռնաձորի հիմնական դպրոցի սաների հետ:

Մայիսի 15-ին ՊՈԱԿ-ի աշխատակիցներն էկոկրթական հանդիպում են ունեցել Մեղրու թիվ 1 միջնակարգ դպրոցի սաների հետ՝ էկոլոգիական իրազեկվածության բարձրացման նպատակով:

Մայիսի 23-ին կենսաբազմազանության միջազգային օրվա կապակցությամբ՝ աշխատակիցներն էկոկրթական հանդիպում են ունեցել «Խուստուփ» արգելավայրին հարակից Վաչագան համայնքի բնակիչների հետ:

Օգոստոսի 6-ին ՇՄՆ «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի գիտության և զբոսաշրջության բաժնի աշխատակիցները՝ «Մաքուր ակադեմիա» կրթական ծրագրի շրջանակում, անց են կացրել էկոկրթական առցանց դասընթաց՝ «Մաքուր» բնապահպանական ՀԿ-ի անդամների հետ: Դասընթացի ուսումնասիրման առարկան կենսաբազմազանությունն էր, որի ընթացքում աշխատակիցների կողմից ներկայացվեց կենսաբազմազանության և էկոհամակարգերի էությունը, դասակարգումը, կենսաբազմազանության պահպանումը բնության ներսում (in situ) և բնությունից դուրս (ex situ), բնության հատուկ պահպանվող տարածքների դերը կենսաբազմազանության պահպանման գործում, ոչնչացման և պահպանման հիմնական գործոնները, Հայաստանի կենսաբազմազանությունը, ՀՀ կարմիր գրքերը, ինչպես նաև ՊՈԱԿ-ի կողմից իրականացվող կենսաբազմազանությանն առընչվող գործունեությունը:

Հայաստանում բնության հատուկ պահպանվող տարածքների օրվան նվիրված միջոցառումների շրջանակում, սեպտեմբերի 12-ին ՇՄՆ «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի գիտության և զբոսաշրջության բաժնի աշխատակիցներն էկոկրթական հանդիպում են ունեցել Կապան համայնքի ղեկավարին կից երիտասարդական խորհրդի անդամների հետ: Միջոցառումը մեկնարկել է բնության հատուկ պահպանվող տարածքների դերի և նշանակության, պահպանության ռեժիմների և դրանց առանձնահատկությունների, բնական գործընթացների խաթարում առաջացնող կենսածին և մարդածին գործոնների, պահպանության ռազմավարության ներկայացմամբ: Հաջորդիվ ներկայացվել են ՀՀ պահպանվող տարածքների առանձնահատկություններն ու արժեքները՝ ՀՀ պետական արգելոցները՝ «Շիկահող»,«Խոսրովի անտառ», «Էրեբունի», ազգային պարկերը՝ «Արևիք», «Դիլիջան», «Սևան»,«Արփի լիճ», պահպանվող լանդշաֆտը՝ «Արփա», իսկ 27 արգելավայրերից՝ Սյունիքի մարզի «Խուստուփ», «Զանգեզուր», «Սոսու պուրակ», «Սև լիճ», «Բողաքար», «Գորիս» արգելավայրերը և բնության հուշարձանները: Առանձնահատուկ ներկայացվել են «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի գործառույթները՝ էկոհամակարգերի և դրանց առանձին բաղադրիչների, կենսաբազմազանության ցուցիչ տեսակների վերահսկման և վերարտադրության ապահովման գործիքակազմերը:

Սեպտեմբերի 25-ին ՇՄՆ «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի գիտության և զբոսաշրջության բաժնի աշխատակիցների կողմից՝ Կապանի թիվ 12 հիմնական դպրոցում կազմակերպվել է էկոկրթական դասընթաց: Հանդիպման ընթացքում աշխատակիցների կողմից ներկայացվել են բնության հատուկ պահպանվող տարածքների ստեղծման նպատակներն ու դասակարգումը, շրջակա միջավայրի վրա մարդկային ներգործության արդյունքում առաջացող

էկոհամակարգերի խաթարումներն ու հետևանքները, Սյունիքի մարզի՝ ԶԿՀ ենթակայության տակ գտնվող ԲՀՊՏ-ները, կենսաբազմազանության էությունն ու ոչնչացման գործոնները, դրա անխաթարության պահպանման միտված միջոցառումները, ինչպես նաև մարդ-բնություն կապի ամրապնդումն էկոզբոսաշրջության միջոցով և ԶԿՀ զբոսաշրջային ծառայությունները:

Համագործակցություն, հանդիպումներ, սեմինարներ

ՀՀ շրջակա միջավայրի նախարարության և Երևանի պետական համալսարանի միջև համագործակցության շրջանակում, նույն համալսարանի աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի 4-րդ կուրսի ուսանող Վահիկ Արզումանյանը փետրվարի 5-ից մարտի 15-ը ներառյալ «Զանգեզուր» կենսոլորտայինհամալիր» ՊՈԱԿ-ում անցնում է մասնագիտական փորձուսուցում, որն իրականացվում է գիտության և զբոսաշրջության բաժնի կողմից: Պրակտիկայի ղեկավար է նշանակվել բաժնի պետ- կենսաբազմազանության մոնիթորինգի մասնագետ Հարութ Աղաթելյանը:

Մարտի 1-ին «Զանգեզուր» կենսոլորտայինհամալիր» ՊՈԱԿ- ի տնօրեն Արման Մկրտչյանը հյուրընկալել է «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ի տնօրենի ժ/պ Արմեն Եսոյանին ու ներկայացուցիչներին և ՇՄՆ «Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Կապանի անտառտնտեսություն» մասնաճյուղի տնօրեն Սասուն Մանուկյանին: Հանդիպման նպատակն էր Համաշխարհային բանկի հետ իրականացվելիք «Հայաստանի դիմակայուն լանդշաֆտներ» (RESILAND Հայաստան) ծրագրի շրջանակներում Կապան խոշորացված համայնքում ռեկուլտիվացիայի և անտառվերականգնման ենթակատարածքների ներկայացումը, ինչպես նաև էկոզբոսաշրջության կայուն զարգացման ու խթանման գործիքակազմի քննարկումը: Ներկայացվել են ռեկուլտիվացիայի և անտառվերականգնման ենթակատարածքների նախնական քարտեզը, ծրագրի իրականացման հեռանկարներն ու ակնկալվող արդյունքները: Քննարկվել է նաև հատուկ պահպանվող տարածքներում էկոզբոսաշրջության խթանման կարևորությունը: Հանդիպման ընթացքում ՊՈԱԿ-ի տնօրեն Արման Մկրտչյանի կողմից ներկայացվել են «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի զբոսաշրջային ներուժն, այդ թվում՝ առկա ենթակառուցվածքները, ինչպես նաև ոլորտում առկա մարտահրավերները, վերազինման և արդիականացման անհրաժեշտությունը: Շեշտադրվել է հատուկ պահպանվող տարածքների կառավարման արդյունավետության բարձրացման գործում հարակից համայնքների հետ կապի ամրապնդումն ու բնապահպանական ծրագրերին բնակչության ներգրավման կարևորությունը:

Մայիսի 13 - 17-ը ՇՄՆ «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի «Արևիք» և «Շիկահող» մասնաճյուղերում՝ «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի ներկայացուցիչների կողմից իրականացվել են մթերված և իրացված թափուկ վառելափայտի, անտառխախտման արձանագրությունների և պահպանության վիճակի մասնակի դիտարկում-

ուսումնասիրություններ, ինչպես նաև կենսաբազմազանության ցուցիչ տեսակների մոնիթորինգ:

Մայիսի 18-ի «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի տնօրեն Արման Մկրտչյանն ու գիտության և զբոսաշրջության բաժնի պետ-կենսաբազմազանության մոնիթորինգի մասնագետ Հարութ Աղաթելյանը մասնակցել են Վորլդ Վիժն Հայաստանի՝ «Երիտասարդները գործելիս. Հայաստանում երիտասարդների զորեղացման և առաջնորդության խթանման» ծրագրի շրջանակում կայացած երիտասարդական ֆորումի՝ «Երիտասարդության դերը այսօրվա մարտահրավերների հաղթահարման գործում» խորագիրը կրող պանելային քննարկմանը, որպես «Երիտասարդությունն ընդդեմ աղտոտման» թեմայի խոսնակներ:

ՀՀ կառավարության՝ ԵՄ աջակցությամբ իրականացվող «Վերականգնում, դիմակայություն և բարեփոխում, Արևելյան գործընկերության առաջնահերթությունները 2020 թվականից հետո» ծրագրի «Լրացուցիչ Բ»» նախաձեռնության շրջանակում ՊՈԱԿ-ի տնօրեն Արման Մկրտչյանը հյուրընկալել է «ԷՅ ԹԻ ԷՄ ԷՍ Սոլյուշնս» ՍՊԸ տնօրեն Արտակ Տեր- Թորոսյանին և «Էկոլայն Ինթերնեյշնլ» անկախ միջազգային կազմակերպության կենսաբազմազանության և կլիմայի փոփոխության ոլորտի մասնագետ Անդրեյ Արտովին՝ ծրագրով նախատեսված «Արևիք» ազգային պարկի հարակից գոտում Լիճքի ջրամբարի կառուցման ծրագրի քննարկման նպատակով:

«Շիկահող» պետական արգելոցի և «Զանգեզուր», «Խուստուփ», «Սոսու պուրակ», «Սև լիճ» պետական արգելավայրերի կառավարման պլանի մշակման գործընթացը փուլ առ փուլ մոտենում է իր տրամաբանական ավարտին: Ծրագրի իրականացման շրջանակում տեղի է ունեցել հերթական հանդիպում-քննարկումը՝ «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի տնօրենի և աշխատակիցների հետ: Քննարկվել են ամփոփիչ թեմաներ, մասնավորապես՝ գործողությունների պլանը, որը պետք է հանդիսանա 2024-2029 թթ-ի ընթացքում կառավարման պլանով սահմանված ռազմավարական նպատակներին ու խնդիրներին հասնելու ճանապարհը:

ՇՄՆ «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի տնօրեն Արման Մկրտչյանը հյուրընկալել էր Կովկասի բնության հիմնադրամի գործադիր տնօրեն Էլիզաբեթ Մեսսուդին և հայաստանյան ներկայացուցչության տնօրեն Արման Վերմիշյանին: Աշխատանքային երկօրյա ճանաչողական այցի շրջանակում ՊՈԱԿ-ի տնօրեն Արման Մկրտչյանի ուղեկցությամբ ԿԲՀ գործադիր տնօրեն Էլիզաբեթ Մեսսուդը և հայաստանյան ներկայացուցչության տնօրեն Արման Վերմիշյանն այցելեցին կազմակերպության կառավարման ներքո գտնվող «Արևիք» ազգային պարկ, «Շիկահող» պետական արգելոց և «Սոսու պուրակ» արգելավայր, տեղում ծանոթացել յուրաքանչյուր պահպանվող տարածքի առանձնահատկություններին, մարտահրավերներին և զբոսաշրջային ներուժին: Արման Մկրտչյանի կողմից

ներկայացվել է նաև վերջերս ազգային պարկի տարածքում արձանագրված էգ Ընձառյուծը, որի հայտնաբերումը տարածաշրջանում կարող է ունենալ զգալի դրական ազդեցություն՝ պոպուլյացիայի ավելացման գործում: Շրջայցն ավարտվել է կազմակերպության գրասենյակում աշխատակիցների հետ հանդիպումով, որի ընթացքում ներկայացվել են արձանագրված արդյունքները, քննարկվել են աշխատանքի արդյունավետության բարձրացման հնարավորությունները, զբոսաշրջության խթանման հեռանկարները և այլն:

ՇՄՆ «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի տնօրեն Արման Մկրտչյանը հյուրընկալել է Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի տնօրեն Սարգիս Աղայանին՝ մինչ օրս իրականացված աշխատանքների արդյունքների, համագործակցության արդյունավետության բարձրացմանն ուղղվող գործողությունների քննարկման նպատակով: Շեշտադրվել է հետագայում կազմակերպությունների միջև համագործակցության հուշագրի կնքման անհրաժեշտությունը:

Օգոստոսի 31-ին Կովկասի բնության հիմնադրամի և ՀՀ շրջակա միջավայրի նախարարության նախաձեռնությամբ տեղի ունեցավ «Ռենջեր 2024» միջոցառումը, որի շրջանակում ՇՄՆ «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի ներկայացուցիչ՝ զբոսաշրջության ավագ մասնագետ և հանրության հետ կապերի պատասխանատու՝ Մարիա Պետրոսյանը զբաղեցրել է 2-րդ հորիզոնականը:

ՇՄՆ «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի տնօրեն Արման Մկրտչյանը հյուրընկալել է Գերմանիայի Վերականգնման վարկերի բանկի (KfW) ծրագրերի պորտֆելի ավագ կառավարիչ Ֆրանկ Մյորշլին և վերջինիս գլխավորած պատվիրակությանը և «ՊՏԱԾ-Հայաստան» ծրագրի ղեկավար Միշել Բլիմսրիդերին՝ մինչ օրս «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ում իրականացված ծրագրերին և ընթացիկ աշխատանքներին ծանոթանալու նպատակով: Աշխատանքային այցի շրջանակում Արման Մկրտչյանի ուղեկցությամբ Միշել Բլիմսրիդերը, Ֆրանկ Մյորշլը և պատվիրակության անդամները շրջել են «Շիկահող» պետական արգելոցում, դիտարկել ծրագրով տեղադրված սահմանասյունները: Հաջորդիվ, ՊՏԱԾ- Հայաստան ծրագրի և Վերականգնման վարկերի բանկի (KfW) ներկայացուցիչներն այցելել են Կապան քաղաքում գտնվող՝ ծրագրի միջոցներով ձեռք բերված ՊՈԱԿ-ի նոր վարչական շենքում՝ ծանոթանալու ծրագրի շրջանակում իրականացվող վերանորոգման աշխատանքներին: Սեպտեմբերի 2-ին «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի գրասենյակում տեղի ունեցավ ամփոփիչ հանդիպում, որտեղ քննարկվել են համագործակցության շրջանակում ՊՈԱԿ-ի գործունեության արդյունավետության բարձրացման համար անհրաժեշտ նյութատեխնիկական գույքի ձեռքբերումը, աշխատակազմի վերապատրաստման գործընթացի մեկնարկումը և հետագա իրականացվելիք ծրագրերը:

ՇՄՆ «Զանգեզուր կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի տնօրեն Արման Մկրտչյանը մասնակցել է ՇՄՆ էկոպարեկային ծառայության պետ Վլադիմիր

Կիրակոսյանի ղեկավարած աշխատանքային խմբի՝ Սյունիքի մարզ կատարած այցի շրջանակում սեպտեմբերի 9-ին սահմանամերձ Ներքին Հանդ բնակավայրում տեղի ունեցած հանդիպմանը՝ տեղի բնակչության հետ քննարկում – զրույցներ անցկացնելու նպատակով: Երկուստեկ կարևորվել է քաղաքացիների և պետական համակարգի փոխհարաբերությունների ամրապնդումը՝ ծառայացնելով շրջակա միջավայրի վիճակի բարելավմանն և փոխադրյունավետ զարգացմանը:

Սեպտեմբերի 10-ին «Զանգեզուր կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի տնօրեն Արման Մկրտչյանը «Շիկահող» մասնաճյուղի վարչական շենքում հյուրընկալել է ՇՄՆ էկոպարեկային ծառայության պետի առաջին տեղակալ Վարդան Սարգսյանի գլխավորած ներկայացուցչությանը: ՇՄՆ էկոպարեկային ծառայության Սյունիքի մարզային կառույցների կարիքների և առկա խնդիրների վերհանման նպատակով անց է կացվել խորհրդակցություն:

Քաղաքականության հետազոտական կենտրոնի կողմից՝ Լիտվայի դեսպանատան աջակցությամբ, կազմակերպվել էր «Հասարակական դիմակայության զարգացում՝ ներառական կառավարում և ռազմավարական հաղորդակցություն» թեմայով եռօրյա դասընթաց, որին ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ից մասնակցել է զբոսաշրջության ավագ մասնագետ- հանրության հետ կապերի պատասխանատու՝ Մարիա Պետրոսյանը: Դասընթացին մասնակցել են ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի ներկայացուցիչներ, ՀՀ երքին գործերի նախարարության մարզային կառույցների քաղծառայողներ և Սյունիքի խոշորացված համայնքների համայնքապետարանների ներկայացուցիչներ: Դասընթացի ընթացքում հանդես է եկել նաև Հայաստանում ԵՄ դիտորդական առաքելության ղեկավարի տեղակալ Մարեկ Կուբերսկին:

Հանրության առցանց իրազեկում

Կազմակերպության ԲՀՊՏ-ների զբոսաշրջային գրավչությունների ճանաչելիության բարձրացման նպատակով «Նոր Հայաստան» հեռուստաալիքի «Ֆեյս քընթրոլ» հեռուստահաղորդման շրջանակում նկարահանումներ են իրականացվել ՊՈԱԿ-ի «Խուստուփ» արգելավայրում և «Շիկահող» պետական արգելոցում:

Հանրության իրազեկման նպատակով ՊՈԱԿ-ի ֆեյսբուքյան պաշտոնական էջում տեղադրվել են տեղեկատվական նյութեր ՊՈԱԿ-ի ԲՀՊՏ-ների, կենսաբազմազանության, էկոհամակարգերի առանձին բաղադրիչների վերաբերյալ, տեղադրվել են ԲՀՊ տարածքներում արված լուսանկարներ և տեսանյութեր, ինչպես նաև իրականացված աշխատանքների վերաբերյալ տեղեկատվություն: Ինն ամիսների ընթացքում նշվող բնապահպանական տոների կապակցությամբ ֆեյսբուքյան էջում արվել են հրապարակումներ:

Հայ բլոգեր, հոդվածագիր Լիլիթ Խաչատուրյանի lil.am կայքի շրջանակում իրականացվող Հայաստանի էկոզբոսաշրջային վայրերը ներկայացնող

ճանաչողական հաղորդման շրջանակում «Զանգեզուր» արգելավայրի Կապուտան և Ծաղկարի լճերում իրականացվել են նկարահանումներ:

Երիտասարդության միջազգային օրվան նվիրված միջոցառումների շրջանակում՝ ՇՄՆ «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ն իր մասնակցությունն է ունեցել Կապան համայնքում անցկացվող ամենամյա «Երիտասարդական փառատոն-8848» 2024-ին: Տաղավարային ցուցահանդեսի շրջանակում ներկայացվել են կազմակերպության ենթակայության ներքո գտնվող՝ Սյունիքի մարզի բնության հատուկ պահպանվող տարածքների զբոսաշրջային ներուժը և մատուցվող էկոզբոսաշրջային ծառայությունները: Ցուցադրվել է նաև արշավային, գիտահետազոտական և էկոզբոսաշրջային գույքը՝ դրանց կիրառման մեթոդներին ծանոթացնելու նպատակով:

ՀԿՀ «Սոսու պուրակ» արգելավայրի տնկարանի գործունեության վերաբերյալ իրազեկման բարձրացման նպատակով լուսաբանվել է «Սյունիք» հեռուստաընկերության կողմից:

Մաքրման աշխատանքներ

Առանց թափոնների միջազգային օրվա կապակցությամբ մարտի 30-ին ՇՄՆ «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի «Արևիք» ազգային պարկում իրականացվել են մաքրման աշխատանքներ: Օրվա վերաբերյալ իրազեկման նպատակով «Արևիք» մասնաճյուղի տնօրեն Արթուր Սամվելյանի կողմից շաբաթօրյակին ներգրավվել են նաև Ալվանք և Շվանիձոր բնակավայրի երիտասարդները:

3. «Սոսու պուրակ» պետական արգելավայրի վերականգնման միջոցառումների իրականացում

3.1 Արևելյան սոսու և Հունական ընկուզենու բնական վերաճն ապահովելու նպատակով խնամքի և սանիտարական միջոցառումների իրականացում.

ՊՈԱԿ-ի ենթակայության տակ գտնվող «Սոսու պուրակ» պետական արգելավայրի տնկարանում ապրիլին իրականացվել են մաքրման աշխատանքներ և 500 քմ-ի վրա կատարվել է ցանքս:

«Սոսու պուրակ» արգելավայրի տնկարանից ՀՀ ՊՆ սահմանապահ զորքերի Ն զորամասերին նվիրաբերվել է 100 հատ տնկի:

ՊՈԱԿ-ի ենթակայության տակ գտնվող «Սոսու պուրակ» արգելավայրի տնկարանից «Կապանի կոմունալծառայություն» ՀՈԱԿ-ին տրամադրվել է 120 հատ Արևելյանսոսի՝ Կապան համայնքում ծառատնկման աշխատանքների նպատակով:

«Զանգեզուր» Կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ

Տնօրեն՝ Ա. Մկրտչյան